

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

Բարիզ, 24 Դեկտեմբեր 1929

Հայրենակիցներ,

Մանրակշիւ աղէտ մը ևս կուգայ վրդովել գաղութահայութիւնը: Թուրքիայէն բազմաթիւ հայրենակիցներ, գլխաւորաբար Քրտաբնակ գաւառներէն, նոր հալածանքի ենթարկուած, կը տեղահանուին և դէպի Սիւրիոյ սահմանները կ'ուղղուին: Կարելի է ըսել որ Սարբերդի և Տիարպէքիբի շրջանին բոլոր հայերը, սահմուկած, Կառավարութեան այդ ազդանշանին մէջ տեսնելով վաղուան անստուգութիւնը, արտագաղթի ճամբան սկսած են նախընտրել: Հալէպէն հասած հուսուցի տեղեկութիւններէն կը հետևի թէ բազմաթիւ գաղթականներ, մեծ մասամբ Բալուէն և Մարտինէն, եկած են Հալէպ և Ճէզիրէի կողմերը, մասնաւորապէս Հասիշէ, Քամիշլի և Բաս-Իւլ-Այն: Շատերը կը գտնուին խղճալի վիճակի մէջ, որովհետեւ ոչ իսկ ժամանակ ունեցած են իրենց ունեցածը ծախելու. ընդհանուր առմամբ, անցեալի մղձաւանջներով անդոհուած, իրենց առաջին մտածումը եղած է աղատել իրենց կեանքը, առաջին տարտամ լուրերուն վերայ հիմնուելով: Հ. Բ. Ը. Միութեան Գահիրէի Շրջանակային Յանձնաժողովը և Հալէպի Մասնաճիւղը իրենց տեղեկագիրներովը անհրաժեշտ կը նկատեն կազմակերպուած օգնութիւն այդ նոր աղէտին զոհերուն համար, որպէսզի կարելի ըլլայ անոնց պարէնաւորումին և տեղաւորումին հօգ տանիլ: Առ այս Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսի հովանաւորութեամբ Հալէպի մէջ կազմուած է Յանձնախումբ մը, որուն Հ. Բ. Ը. Միութեան կողմէ զրկուեցաւ 450 անգլ. ոսկի, առաջին օգնութիւնները ընձեռելու համար: Հալէպէն վերջնազոյն հեռագիր մը կ'իմացնէ թէ ձեռնարկութիւնը ծայրաստիճան է և մահացումը մտահոգիչ:

Միութեան Կեդր. Վարչ. Ժողովը նկատելով կացութեան լրջութիւնը, յարմար դատած է կազմակերպել անմիջական օգնութեան գործը հանգանակութեան մը միջոցաւ, որպէսզի պատեհութիւն ընծայուի բոլոր սրտցաւ հայրենակիցներուն անխորոքէն մասնակցելու սոյն համազգային ձեռնարկին: Այդ նպատակաւ Բարիզի մէջ կազմուած է կեդրոնական խառն Յանձնախումբ մը, որ ներկայ յայտարարութեամբ կոչ կ'ուղղէ ամէն անոնց որ կը փափաքին կատարել իրենց եղբայրական պարտականութիւնը Թուրքիոյ զժբախտ բեկորներուն հանդէպ, որ հարկադրուած են իրենց բոյները լքել ձմրան այս ցուրտին և տարագրութեան զրկանքները և նեղութիւնները կրել անգամ մը ևս: Տարակոյս չունինք որ ամէն հայ իր կարողութեան չափով պիտի փութայ իր օժանդակութեան բաժինը բերել, որպէսզի ժամ առաջ կարելի ըլլայ տեղւոյն վրայ պատրաստել կայաններ և օժանդակել տարագիր գաղթականներուն, որ արժանի են մեր սրտագին կարեկցութեան:

Կը խնդրենք զրամական նուէրները ստիպողաբար ուղղել Յանձնախումբի Գանձապահ Տ. Լ. Կիւմրիշկերտանի, Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնատեղին, 11 Աքուար Ալպոնի:

Կեդր. Յանձնախումբ

Սիւրիոյ նոր Գաղթականներու Հանգանակութեան

Խորհրդակցանք

- | | | | |
|------------------|--------------|------------------|----------------|
| Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ | Պատ. Նախագահ | ԲՐՈՅ. ԱԴՈՆՑ | Լ. ԲԱՇԱԼԵԱՆ |
| Վ. ՄԱԼԷՉԵԱՆ | Բարձրագոյն | ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ | Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ |
| Լ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ | Գանձապահ | Ա. ՀԱՄԲԱՐՉՈՒՄԵԱՆ | Ա. ՉՕՊԱՆԵԱՆ |
| | | ՉԱՐԵՀ ՊԷՅ ՆՈՒՊԱՐ | ՆԵՐՍԷՍ ՕՀԱՆԵԱՆ |

Ս Ս Ա Յ Ո Ւ Ա Ն Գ Ի Բ Գ Ե Բ

1. Թ. ԱԶՏԵԱՆ, Բառասանակ, Արեւակ Զօյանցեանի Յառաջարանով. Արդիական արուեստով գեղանկարեց Մելիքն Քելպազցեան. Տպր. Սէլամէթ, Դանիէլ Յովհաննէսեան, Կ. Պոլիս, 1930. 8° էջ 114. Գին՝ 200 Ղրուշ. Արտասահման 1,5 Տոլար, 35 Ֆրանք. Հասցէ. T. Azadian, Péra, R. P. 182. STAMBOUL.

2. ԸՆԴԱՐՁԱԿ ՏԱՐԵՑՈՅՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ, Նոր Շրջան Գ. Տարի 1930, Կազմուած խմբագրական մարմնի մը կողմէ, [Սեփականութիւն Ս. Փ. Ազգ. Հիւանդանոցի]. Տպր. Յ. Մ. Սէթեան, Կ. Պոլիս. 8° էջ 374 + 11. Գին՝ 250 Ղրուշ. 50 Ֆրանք:

3. ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԵՐԿԵՐ (Գ), ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ, Կենսագրական Միւսիոնցե, Հրատարակութիւն ՕՇԱԿԱՆ Տնօրէնութեամբ Արտաշէս Յովհաննէսեանի. Տպ. Ներսէս, Պարիս 1929. 8° էջ 74+2. Գին՝ 10 Ֆրանկ, Ամերիկա կէս Դոլար. Ընտիր օրինակ 25 Ֆրանկ:

4. LE PSAUTIER ARMÉNIEN ILLUSTRÉ, par Gabriel Millet et Sirarpié Der-Nersessian (արտատպուած Revue des Études Arméniennes-ի Tome IX-էն, Fascicule 1. 1929) էջ 137 — 181. հայ եւ յոյն Սաղմոսներէ ընտրուած նկարներու եւ Զարգազիւններու նմանանութիւններով զարգարուած:

5. ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ Մեծապետ ձեմարանի Փափօփօ, Սօֆիա, պատկերազարդ. Տպր. Պ. Պալլըզեան, Սօֆիա. — Գին՝ 50 Սէնթ, 10 Ֆրանք:

6. ՅՐԱՆՍԱՀԱՅՈՅ ԳՐՊԱՆԻ ՕՐԱՑՈՅՑ, 1930, կը պարունակէ ի միջի այլոց Հայ եւ Ֆրնս. Ազգ. եւ եկեղեցական տօներ, հայ մտաւորականներու ծընընդեան եւ մահուան ու պատմական դէպքերու թուականներ. (պատրաստեց) Յովհ. Վարժապետեան. Տպր. «Ալիս», Մարսէյլ. Գին 3 Ֆրանք:

7. ՍՈՒՐԲ ՕԳՈՍԻՆՈՍԻ ԵՒ ՆԱՐԵԿԱՅԻԻ ԵԱՒԴԻՆ Մէջ կամ La Passe-Temps d'un Sédentaire. Գրեց

Փրօֆ. Յ. ձիւսեան. Տպր. «Լիբանան» Պէրուլ, 1930. փոքր 8° էջ 147. Գին՝ 50 Ս. Դ.:

8. ԻՆՁ, ՀԱՅԱՍՏԱՆ, ՔԵԶ ՄՈՌԱՆՈՒ. Խօսք Պետրոս Դուրեանի, եղանակ եւ ձայնագրութիւն Յ. Սարկիսեանի, Զօնուած երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոսի, Նորին Ամեն. Յորեկեանի առթիւ: Գին 50 սէնթ: Հասցիքէն բաժին մը պիտի հանուի Դուրեան Մասեմադարանի համար, իսկ մնացածը բոլորովին նուիրուած է Հ. Բ. Ը. Միոնիթեան:

Հասցէ. H. Sargavak, 2321 East 6th St. Long Beach, Calif. U. S. A.

9. ԱՄԵՆՈՐԵԱՅ ԱՌԱՋԵՈՐԴ Ե. Ե. Քրիստ. Զանից ընկերակցութեան, 1930, հայացուց Յ. Թ. Դալանեան. Թիւ 1. Հրակ. Դահլիէի Ե. Ե. Ք. Զանից Ընկ. — Տպ. «Սահակ-Մեծարդ», Դահլիէ, 1930. փոքր 8° էջ 212. Գին 1 Շիլին:

10. Յեղարանական Ծառը Պէշկէօթիւրեան Դերգաստանի, յօրինեց Քրօֆ. Կ. Պէշկէօթիւրեան:

11. ՆՈՐ ԴԱՍՏԵՐԱՅԳ ԿՐՕՆԻ, Ա. ՀԻՆ ՈՒԻՏԻ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ, Տարրական կարգերու համար. (պատրաստողը) Տ. Զարմայր Ա. Քնն. Կէղիւրեան. Հրակ. «Արև» գրատան, Յակոբ Արբանամեան. Պապը Այի, Բէշիս էֆ. Խան, Թիւ 10. Տպր. «Թէսհիլաթ», Կ. Պոլիս 1929. 8° էջ 116, Պատկերազարդ. Գին 40 Ղրուշ (Թիւրք):

12. Բ. ՆՈՐ ՈՒԻՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻԻՆԸ. Յիսուսի կեանքը. — Հրաշքները. — Առականքը. — Քարոզութիւնները. — Քրիստոսի եկեղեցոյ Հաստատութիւնը. Հայց. Եկեղեցի. Իր Լուսաւորիչները. — Հայրապետները. — Տոները. — Դասուարիւնը. — Պատրաստողը, Հրատարակիչը, Կայլն՝ Նոյն. 8° էջ 146. Պատկերազարդ. Գին 50 Ղրուշ:

13. L. G. GUERDAN, LES FAUX-POIDS de BALANCE (Roman), 8° p. 223, Edition Argo, Paris. Prix 12 Francs.

ՄԻՈՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐ ՄԻԻՐԻՈՅ ՀԱՄԱՐ

- ՀԱԼԷՊ. — Պօղարեան Իրասուն. Փոստարկը Թիւ. 285
- ՊԷՅՐՈՒԹ. — Տիար Վահան Ուզունեան. Փոստարկը Թիւ. 491
- ԴԱՄԱՍԿՈՍ. — Տիար Ֆիլիբ Գաբրիէլեան. Պապը Շարքի

Սիւրբոյ մէջ՝ մեր յարգելի Բաժանորդները Միոնի բաժանորդագրութեան ու գրամական խնդիրներու համար կրնան գիմել վերողրեալ Գործակալներուն:



Ս Ի Ո Ն Ն Ո Ւ Ի Ր Ո Ղ Ն Ե Ր 1930-Ի Հ Ա Մ Ա Ր

Գեր. Տ. Բարզևն Եպս. Կիւլէսէրեան Երուսաղէմէն, Կիւլէսէրեան Վահէին՝ Հալէպ. — Պէրղոստեան Կարապետին՝ Հալէպ. — Կիւլէսէրեան Եղբարց՝ Արլինկթըն. — Կիւլէսէրեան Աւետիքին՝ Փովիա. — Արզուեան Գրիգորին՝ Ուսար:

Գեր. Տ. Ամրատ Եպս. Գաղաղեան Կ. Պոլիսէն՝ Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցին:

Տ. Յարութիւն Վրզ. Պարոնեան Երուսաղէմէն՝ Յովսէփեան Տ. Յարութիւն քահանային Կալաց. — Ասատուրեան Արամին Կիպրոս:

Տ. Սուրէն Վրզ. Քէմհաճեան Երուսաղէմէն՝ Սաշիկեան Տ. Պսակ քհն. ին Գահիրէ:

Քաջատուր Գրազիբեան Երուսաղէմէն՝ Գալբաքեան Նշանին Ռումմոնի:

Նիկողոս Պատէփեան Երուսաղէմէն՝ Երուսաղէմացի Հայոց Բարես. Միութեան Երկու օրինակ:

Լեոն Պրուսայեան Ռէմլէէն՝ Սիւրմէիեան Էօթէնին Oliv - View. Calif. (U. S. A.) Զատեան Զարեհ Բրակայէն՝ Պէզճեան Վար-

ժարանին Կ. Պոլիս. — Մանիսայեան Վարժարանին Գահիրէ. — Գպրոցասէր Տիկնանց Վարժարանին՝ Ռէյնսի. — Սեմական Լեզուաց Վարժարանին Բըրակա:

Զատեան Ե. Վիեննայէն՝ Ազգ. Կեդր. Վարժարանին Կ. Պոլիս:

Երուանդ Պէյ Աղաթօն Նիսէն՝ Տ. Սորէն Քնյ. Գուլիկեանի Սայտա. — Պասթաճեան Վահանին Զարքա:

Գուլումճեան Հայկազուն Մարտէյլէն՝ Ազգ. Վարժարանին Համատան:

Յէրմանեան Յ. Ս. Լօզանէն՝ Հայկ. Վարժարանին Ժընէվ:

Անդրանիկ Կէնճեան Բարիզէն՝ Ժամկոչեան Բ. ին Պէյրուս:

Մանուկեան Գրիգոր Աղեքսանդրիայէն՝ Որբորու Տունին Աղեքսանդրիա:

Գաղաղեան Գրիգոր Զիքակօէն՝ Թորոսեան Մարտիկին Բարիզ:

Գոլոյեան Յարութիւն Զիքակօէն՝ Մարգարեան Տ. Նշան քհնյ. ին Հալէպ:

Ս. ԱԹՈՒԻՍ ՏՊԱՐԱՆԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Տ. ԵՂԵՇԷ ԱՐՔԵՊՍ. ԴՈՒՐԵԱՆ

ԸՆԹԱՑՔ Ի ԳՐՈՑ ԲԱՐԲԱՌ
Գ. ՏԱՐԻ

Գրարարի ուսուցման ամէնէն հաճելի և ամէնէն գործնական մեթոտով պատրաստուած դասագիրքերուն վերջին ընթացքը. Գին՝

7 Եգ. Ղրշ. կամ Մէկուկէս Շիլին

Հայերիև Բանասիրութեան Այբու-րիկին հետ միասին կազմուածը՝

10 Եգ. Ղրշ. կամ 2 Շիլին

Կ Ո Ւ Ի Ի Ն

Վ Ա Ր Ք Մ Ա Շ Թ Ո Ց Ի

ՈՒՂՆԵԱԼ ԵՆ ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ

Ի

Գ Ա Ռ Ն Ե Ի Կ Յ Ն Տ Գ Լ Ե Ա Ն Է

4^o էջ 100

Ընդարձակ ներածութիւն, Համեմատութիւններով և Բառաքննութիւններով լուսարանուած Բնագիր և կարևոր Մանօթութիւնք, ընտիր թուղթի վրայ շքեղ տպագրութիւն.

Գին՝ 4 Շիլին կամ 1 Տոյար